

Աստուծոյ անգամ ինչ հրապարակի
Ստորագրութեան պէտք է իմանալ
առի խանը վարէ յարը :



Տարեկան գինն է Կանխիկ 4 Տէճր
Դուրսերէն Բաժանորդ է դրոշմէ
ըն՝ Ժողովարի ծախսը վճարելու էն :

ՀԱՆԴԻՍ ՈՒԹՕՐԵԱՅ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

1862

ԹԻՒ 32

Ա. Օ. Դ.

Բ. Տարեգարծնուս վերջին թերթը կէս
տալերնուս՝ Մեծարգոյ բաժանորդաց նե-
րումը կը խնդրենք, և պատճառը ուրիշ
բան չէ՝ եթէ ոչ Ազգային տպարանի վար-
ձակալութենէ հրաժարելնիս. հետեւաբար
մեր սրտմաշութենէ և արգոյ բաժանորդը
այլանդակ գրեր կարդալէ ազատուելուն
կողմնակի ոչ սակաւ ուրախանալու առիթ
ունենցած կ'ըլանք : Յառաջիկայ տարւոյս
սկզբնաւորութիւնը նոր-գիր՝ նոր տպարան
և նոր ոճով՝ նոյ՛ 15 էն կ'սկսինք :

ԵՄԷ ՄԱՐԴԻՆ

Ննտանեաց մայրերու դաստիարակութիւնը .

Տես թիւ 31 :

Լերոպական ընտանեաց աս պատկերին
դիմացը՝ արեւելեան ընտանիքը դիր. առա-
ջինը հաւասարութեան ու սիրոյ վրայ կը
կենայ, երկրորդը՝ բազմակնութե՛ ու գե-
րութեան վրայ, որոնք մինակսիրոյ անամա-
կան կատաղութիւնը կը թողուն, բայց
անոր քաղցր աղերսն ու աստուածե-
ղէն հրապոյրը կը բառնան : Երկր մարդ
մը կրնայ բազմութիւ կանանց հետ ապրիլ,
բայց անոնցմէ շատերը սիրել անհնարին է :
Գեղեցիկ մանկամարդաց բազմութեան
մէջ ըլլալով, վիճակը խիստ տխուր է . ա-
ռանց սիրելու կը ստանայ, առանց սիրոյ
ալ կը ստացուի : Թանձր հեշտութիւննե-
րով արբեալ, գերիններուն մէջ առանց ըն-
տանեաց, զակններուն մէջ առանց գթոյ՝
իրեն նմանները կը բանտարկէ, և անոնց
պահապանները կը յապաւէ : (Ինչ ներքե-
նայնէ.) իր տունը տանջանաց, փասու և
պռնկութեան տեղ կ'ընէ : Ետանի թէ աս

անամական կեանքն անոր երջանկութիւն
մը շնորհէր : Բայց ոչ. զգայութիւնները
կը բթանան . հոգին կը հիւժի, և մինչև
գերեզմանին եգերքը հետամուտ կ'ըլլայ
զգայութիւններուն ան հեշտութեանը որ
զինք կը գրգռեն ու իրմէ կը փախչին :

Կը ճանչնաք ան սիրուն արուեստագե-
տը, ան արագ ճանապարհորդը որ յիշա-
շատակարանը գեղեցկացնելու համար,
կարծես թէ թռչնոյ բնութիւն ունէր :
Ծիծուան պէս թեթեւ կը սրանայ, մինչև
կոստանդնուպօլիս, Թերէ, Երուսաղէմ,
մինչև բրգանց ստորոտը կը թռչի. հոն կը
հանգչի, իր մատեանը կը ծրագրէ, գործը
կատարեալ կ'ընէ. յետոյ օր մը յանկարծ
կը տեսնուի, որ Փարիզու մէջ էր գերքը կը
հրատարակէ, պատկեր մը կը յօրինէ, մեր
տեսարանները կ'ուզէ, Եգիպտոս և Յու-
նաստան. ըրած արշաւանացը վրայ բարե-
կամներուն հետ կը խօսի այնպէս՝ ինչպէս
որ զինուոր մը գտնուած ծակաւներուն վը-
րայ կը խօսէր : Քանի մը ամիս առաջ Գա-
հրէի մէջ եղած ատենը, ուր իր ծառա-
ները զինքը բժիշկ համբաւած էին, քաղ-
քին հարուստ բնակիչներէն մէկը գիշեր
ատեն կարծեցեալ բժիշկն իր տունը բե-
րել տուաւ : Բաւական ընդարձակ սրահ
մը մուծուելով, բարձերու վրայ տարած-
ուած ծերունի մը տեսաւ գրեթէ մերձ ի
մահ, բայց կերպարանքով պատկառելի .
սպիտակ և թաւ մօրուքը կուրծքը բովան-
դակ կը ծածկէր : Ծերունւոյն սպասաւոր-
ներն անոր քովը բերած էին գեղեցիկ մա-
նուկ աղջիկ գերի մը, որուն տեսութենէն
ծերունւոյն փափաքը վայրապար կը զարթ-
նայր : « Դուք Եւրոպացիքդ, ըսաւ ծե-
րունին մարած ձայնով մը, պատուական

դադարները գիտէք : Իսկ ես , առաւա-
պէս վարձատրելու պատրաստ եմ ան որ
ինձի սա գեղեցիկ գերւոյս սէրը ստանալու
կարողութիւնը չնորհէ : » Այսպէս խօսող
ձերունին՝ դժոյ միանգամայն զգուանաց
արժանի՝ հոն անկեալ կը դնէր : — Օտա-
րականը պատասխան տուաւ . « բոլորեալ
գաղտնիքդ ես չեմ գիտեր : Բայց կարող
ալ ըլլայի , բեզի սորվեցնելէ զգոյշ պիտի
ըլլայի , քանզի մահուանդ պատճառ կ'ըլ-
լար : — Փոյթ չէ , գոչեց օրհասական ծե-
րունին թոթովելով և կանգնելու փորձ մը
ընելով , փոյթ չէ . բաւական է որ , գիտ-
նամ : » Այսպէս խօսելով միւսանգամ ու
գետպառ իր գերի կանանց գիրկը թաւա-
լեցաւ : Ո՞վ գձձուծեան մէջ ինկած մարդ .
իմացական կենաց թեթեւ երեսոյթն անգամ
չունի . շնչաւոր մասը բանաւոր մասն ըս-
պանած է :

Ստանկ ինք իրեն անծանօթ վատթարու-
թեան մը բոլոր հանգամանքն աղէկ ըմ-
բռնելու համար , աս պատմութիւնը Սէլվ
կոչուած գաղգիացի պաշտօնակալի մը նոր
պատմութեանը հետ համեմատել պէտք է :
Պաշտօնակալն Արեւելքի մէջ Սիւլէյման
փաշա անունով հռչակաւոր է : Նաբո-
լէոնի անկումէն ետքը Սէլվ գինուորու-
թիւնը ձգելու ստիպուելով՝ Եգիպտոսի փո-
խարքային կը ներկայանայ . գինուորական
տաղանդներուն համար փոխարքայէն կ'ըն-
դունուի . և առանց կրօնքը փոխելու բըռ-
նադատուելու մեծ հարստութեան տէր
կ'ըլլայ : Յամին 1828, Սէլվ Էնչի մէջ սառ-
րապի մը զեղխութեամբ կ'ապրէր : Եգիպ-
տացի և յոյն գերիներուն ամենէն գեղե-
ցիկները կանանոցին մէջ ունէր . բայց ,
կ'ըսէ աս մանր պատմութիւնը գրող հեղի-
նակը , իր բոլոր հեշտութեանցը մէջ Սէլ-
վին սիրտը թափուր էր , իրեն արժանիքն
կերօջ մը կ'անձկար : « Ղրկէ ինձի , կ'ըսէր
գաղկացի , անդղիացի , խաղացի կնիկ մը .
փոյթ չէ՝ ասանցմէ որը կ'ուզէ ըլլայ , և կը
խոստանամ որ ան ինձի կ'ամուսնացնեմ ,
և աս առանց հոգւոյ և անբան արարածները
կ'արձկեմ : » Ետքը զգայուն կերպով մը ը-
սաւ . « իմ երջանկութեանս ուրիշ բան չի
պակսիր , բայց ճշմարիտ բարեկամ կնիկ մը
որուն միտքն ու սիրտը իմ միայնութիւնս ա-
նդէր , աս գանձը եթէ ունենամ , ուրիշ
գանձերս ալ կրնամ վայելել : » — Աս պատ-
մութիւնը կարդացողն անհնար է որ չգար-
մանայ թէ ինչպէս բնական պատշաճութիւն

մարդս նորէն բռնի կարգի , այսինքն առա-
քինութեան , կը բերէ . եթէ միայն ընկե-
րական կացութիւնները մարդուն սիրտը
հիմէն վատթարացուցած չեն :

Բազմակնութիւնը բուն անասնական վի-
ճակ մըն է . բազմակնութիւնը մեզի գե-
րիներ կուտայ , ամուսնութիւնն՝ ընկեր մը .
բազմակնութիւնը մարդուն բնակութեանը
մէջ անառակութիւնը կը հաստատէ , ա-
մուսնութիւնն ամեն անառակութիւն հա-
լածական կ'ընէ , ու քաղաքացւոյն տունը
սուրբ կը յարգարէ :

Սեղաճներէն՝ որոնք արեւելքի պատմու-
թեանը համապատասխան են , կը հետեւի
թէ քաղաքակրթութիւնը միայն ամուս-
նութեան մէջ կարելի է քանզի մինակ ա-
մուսնութեան մէջ կանայք իրենց մասւոր
և բարոյական կարողութիւնը կրնան կըր-
թել : Ամուսնութեան մէջ մինակ կնիկ
մարդն , իբրեւ կին , երկանը վրայ կարողու-
թիւն ունի . իբրեւ մայր՝ զաւկներուն վը-
րայ . եւրոպական ընկերութիւնը բոլորովին
ասկէ յառաջ եկած է :

Մշտարհիս սկիզբը Աստուած այր մը ու
կին մը միայն ըրաւ . անկէ 'ի վեր երկու
սեռն ալ երկրին վերայ հաւասար թուով
կու գայ : Ուստի ամեն երկի մարդ ընկեր
մը ունենալու է . բնութեան օրէնքն աս է .
մնացածը բարբարոսութիւնն ու ապակա-
նութիւնն է : Չեզ համոզելու համար որ
բնութեան օրէնքն աս է , ամենէն քաղցր
տեսարանի մը միտ գրէք , և պիտի հիանաք :
Երկու մանուկ սիրականներ դնենք . եր-
կուքն ալ միեւնոյն սիրով շարժեալ՝ մէկ
խորհուրդ ունին , այն է մէկտեղ կեալ ու
մեռնիլ : Երկրիս վրայ ինչ աստուածային
բան որ կայ՝ անոնց հոգի կուտայ ու զանոնք
կը բորբոքէ : Ոչ ապաքէն անոնք միեւնոյն
էակին երկու կէտերն են որ իրար կը գըռ-
նեն . ոչ ապաքէն քանի որ հոգին իր կատա-
րելութեանը կը հասնի , զգացումներն ալ
տակաւ կը մեծնան , ու բախտութիւն ալ հետ
զհետէ մարդու կ'ըլլայ : Ո՞հ , սերն առա-
քինութիւնները որչափ դիւրին ու զոհերը
որչափ հեշտ կ'ընեն : Ան որ կը սիրէ հզօր
է , ան որ կը սիրէ՝ արգար է , ան որ կը սի-
րէ՝ զգաստ է . ան որ կը սիրէ՝ ամեն բանի
կը ձեռնարկէ , ամեն բանի կը համբերէ :
Ճշմարիտ սիրողի մը հոգին սուրբ տաճար
է , ուր խուսկն անդադար կը ծխի , ուր ա-
մեն ձայն Աստուծոյ վրայ կը բարբառի ,
ուր ամեն յոյս անմահութեան վրայ է :

ըլանք ուր գետնափորն է, աւազակներուն տեղը կրնայ մեզի ցուցնել: Ոչ, տէր, ըսի. բանդի մտած առենս գիշեր էր. ելած առենս ալ առտուան դէմ այնպէս մուտ էր, որ տեղը դիտել ու միտքս պահել անկարելի էր: Աս խօսքին վրայ գատաւորը գնաց, ըսելով թէ բանտապետին կ'երթայ պատուիրելու թէ դուռներն ինծի բանայ: Արդարեւ, վայրկեան մը ետքը բանտապետին եկաւ երկու սպասաւորով, որոնց ձեռքը ծրար մը լաթ կար: Երկուքն ալ ծանրութեամբ, և առանց բան մը ըսելու կռնկէս վերարկուս ու բաձկոնս հանեցին, որոնք ազնիւ ասուէ (Չոխայ) և նոր էին ու հին պարեգօտ մը հագցնելէ ետքը թեւէս բռնելով իս բանտէն դուրս ըրին:

Բանտէն ազատած ըլլալու ուրախութիւնը մեծ պիտի ըլլար, եթէ այլանդակ հագուստիս համար վերջին աստիճան չ'ամաչէի: Խորհեցայ որ նոյն ժամայն քաղքէն դուրս ելլեմ, որ իս մարդ չ'տեսնէ, քանզի բազմութեան մէջ այնպէս անհեթեթ երևնալ խիստ դժուարս կու գար. բայց և այնպէս երախտագիտութիւնս ամօթը յաղթեց. և խիոյն երգչին շնորհակալ ըլլալու գացի, քանզի ան մարդուն մեծապէս երախտապարտ էի: Իս տեսնելուն պէս չկրցաւ ծիծաղը բռնել: Ա՛տ ինչ է, Ժիլ Պլաս, ըսաւ. ճշմարիտ, աս հագուստին տակ առջի բերան քեզ չ'ձանձցայ. արդարութիւնը ինչպէս կը տեսնեմ քեզի դէմ խստիւ վարուած է: Արդարութեան դէմ քանգատ չունիմ, ըսի. օրէնքն ապիրատ չէ. բայց երանի թէ օրէնքին պաշտօնեաներն արդարակորով մարդիկ ըլլային. գէթ լաթերս ինծի կը թողուին. քանզի կարծեմ աղէկ վճարեցի: Իրաւունք ունիս, ըսաւ երգիչը, բայց պիտի ըսուի թէ ասոնք ձեւեր են որ պիտի պահուին: Ի՞նչ կը կարծես, կը կարծես թէ ձին իր բուն տէրոջը տըրուեցաւ. ամենեւին. աղէկ գիտեմ. ձին հիմա ատենագարին ախոռն է. պատճառը հարցնելու ըլլաւ, կ'ըսեն թէ գողութեան ապացոյց ըլլալու համար կը պահենք. և կարծեմ խեղճ երկրասարդը թամբին փոկն անգամ պիտի չընդունի, թող թէ ձին. բայց ինչ որ է. աս մէկ դի թողունք. հիմա բու միտքդ ի՞նչ է. ի՞նչ ընել կը խորհիս: Ես, ըսի, Պուրկոս երթալ կը խորհիմ. երթամ տիկինը գտնեմ, որուն ազատիչն եղայ. ան տարակոյս ինծի քիչ մը ստակ կ'ուտայ, և նոր լաթ կրնամ գտնել. անկէ անմիջապէս

Սալամանքա կ'երթամ, ուր լատիներէնովս կրնամ գործ մը գտնել: Դժուարութեանը ճամբուն հաւար է. քանզի ճամբուն համար գոնէ քիչ մը ստակ պէտք է. գիտես որ առանց ստակի ճամբայ ելլելը խելք չէ: Հասկցայ, ըսաւ երգիչը. ահա քսակս. արդարեւ քիչ մը վտիտ է, բայց գիտես որ երգիչ մը եպիսկոպոս չէ: Աս ըսելով ծոցէն քսակը հանելով ինծի տուաւ այնպէս յօ. ժար սրտով որ չկրցայ մերժել: Երգչին մարդասիրութեանը սրտանց շնորհակալ եղայ, որպէս թէ աշխարհիս ոսկին ինծի պարգեւած ըլլար. և հազար երգիչամբ խոստացայ որ աս շնորհքին փոխարէն անոր կարելի եղած ծառայութիւնն ընելու պատրաստ եմ: Յետ այսորիկ ողջոյն տալով հրաժարեցայ. և անմիջապէս, առանց ուրիշ անձանց այցելութիւն ընելու որոնք ազատութեանս նպաստ ըրած էին, քաղքէն դուրս ելայ. բայց մօքէս ամենն ալ օրհնելով կ'օրհնէի:

Երգիչը քսակին համար վտիտ ըսելու իրաւունք ունէր. քանզի քանի մը դահեկան մինակ դտայ. ան ալ ի՞նչ դահեկան. քիչ մը պղնձէ մանրուք. բարեբախտութեամբ երկու ամսէ 'ի վեր խիստ սակաւապէս կեանքի մը սովորած ըլլալով, ճամբան ան աստիճան խնայութեամբ գացի, որ Բոնտէ Մուլայի մէկունը հասնելէ ետք, որ Պուրկոսէն շատ հեռու չէ, քսակիս մէջ տակաւին քանի մը մանր դահեկան կար: Հոն կենալով Տոննա Մենչիային վրայ սկսայ հարցուփորձ ընել. պանդոկ մը մտայ որուն տէրը հասակով կարճ, չոր, բայց խիստ ու կազեցող կնիկ մըն էր. ծուռ ծուռ երեսնայելէն հասկցայ որ հագուստիս չհաւնեցաւ, բայց ամենեւին դժուարս չեկաւ: Սեղանի մը քով նստելով. քիչ մը հաց ու պանիր կերայ. քանի մը դաւաթ ալ յոռի, խիստ յոռի գինի մը խմեցի: Աս փառաւոր ճաշէն ետքը որ հագած հանգերձներուս շատ յարմար էր, Պանդոկապետ կնիկանը հետ խօսակցութեան մտայ. բայց կնիկը խոժոռ դէմքովը հագիւ հարցումներէս տաանէն մէկուն կարճ պատասխան մը տալով կ'իմացներ թէ հետս խօսելէ չախորժիր:

Հարունայելի

(**)